ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Վանաձոր 19 օգոստոսի 2025

Լոռի Բերդի համայնքապետարան (ՀՎՀՀ՝ 06954163, հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 1- ին նրբ.շ.2), ի դեմս Լոռի Բերդ Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից

և

«Ֆորտունա» ՍՊԸ (ՀՎՀՀ՝ 06404545, հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Աղայան փող., 81/2-1 շենք), ի դեմս տնօրեն Կարեն Արշակյանի, որը գործում է «Ֆորտունա» ՍՊԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից (հետագա շարադրանքում Պատվիրատուին և Կատարողին միասին անվանելով «Կողմեր») կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Սույն պայմանագրում.

(ա) բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան է բխում կոնկրետ դրույթի ենթատեքստից, եզակիով օգտագործված բառերը ներառում են նաև հոգնակին և հակառակը,

(բ) հղումն այլ պայմանագրի կներառի այդ պայմանագիրը՝ բոլոր փոփոխություններով և լրացումներով,

(գ) վերնագրերը ներառված են միայն հղումների մատչելիության համար և չեն կարող ազդել սույն պայմանագրի դրույթների մեկնաբանության վրա:

1.2. Սույն պայմանագրում օգտագործված հետևյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

«Ծառայություններ»	սույն պայմանագրի 2-րդ կետով նախատեսված ծառայությունները,
«Սակագներ»	Ծառայությունների դիմաց վճարվող սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված ծառայությունների արժեքը,
«Ծախսեր»	Կատարողի կողմից Ծառայություններ մատուցելու կապակցությամբ կատարվող ծախսեր,
«Անձ»	իրավաբանական և/կամ ֆիզիկական անձ:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել ծառայություններ (Ծառայություններ) սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրանց դիմաց: Ծառայությունների նկարագիրը և մատուցման ժամանակացույցը ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված **1**-ում:

2.2. Պատվիրատուն պարտավոր է մատուցվող Ծառայությունների համար վճարել Կատարողին սույն պայմանագրի 3-րդ կետի համաձայն:

2.3. Ծառայություններ մատուցելիս Կատարողը պարտավոր է հետևել Պատվիրատուի ցուցումներին և պահանջներին:

2.4. Կատարողը պարտավոր է ժամանակին տեղեկացնել Պատվիրատուին Ծառայությունների մատուցմանը խոչընդոտող որևէ հանգամանքի առկայության մասին:

2.5. Պատվիրատուն պարտավոր է Կատարողին ժամանակին տրամադրել Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ և պահանջվող տեղեկատվությունը:

3. ՍԱԿԱԳՆԵՐ, ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

3.1. Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների սակագինը կազմում է՝ 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ ներառյալ բոլոր հարկերը

3.2. Պատվիրատուի կողմից Ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է հետևյալ կարգով՝ դուրս գրված հարկային հաշվարկային փաստաթուղթը (հարկային հաշիվ կամ հաշիվ-վավերագիր) Պատվիրատուին ներկայացնելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Վճարումը կատարվում է փոխանցման միջոցով՝ Կատարողի բանկային հաշվին, որի վավերապայմանները նշվում են սույն պայմանագրում:

3.4. Կատարողի օգտին Ծառայությունների դիմաց վարձատրությունն ու ցանկացած այլ վճարումները կատարվում են ՀՀ դրամով:

3.5. Պատվիրատուի կողմից ծառայությունները համարվում են ընդունված համապատասխան հաշվի ստորագրման պահից:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

4.1. Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

4.2. Կատարողը պարտավոր է հատուցել սույն պայմանագրով իր պարտականությունների դիտավորյալ խախտմամբ Ծառայությունների ոչ պատշաճ մատուցման արդյունքում Պատվիրատուին պատճառված իրական վնասը:

5. ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և դադարում է Կողմերի կողմից սույն պայմանագրով իրենց պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

5.2. Սույն պայմանագրի ավարտը **2025**թ.-ի օգոստոսի **31**-ն է:

5.3. Եթե այլ բան նախատեսված չէ սույն պայմանագրով, սույն պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած ժամանակ՝ կողմերի համաձայնությամբ:

5.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի անհապաղ լուծելու սույն պայմանագիրը՝ մյուս կողմին գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով՝

(ա) եթե մյուս Կողմը թույլ է տվել սույն պայմանագրի էական պայմանների խախտում և չի ուղղում այդ խախտումը՝ այդպիսի խախտման առկայության և այդ խախտումը ուղղելու պահանջի (եթե այն հնարավոր է ուղղել) մասին գրավոր ծանուցում ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում,

(բ) եթե Կատարողը դադարեցնում է իր գործունեությունը,

(գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

5.5. Ցանկացած հիմքով սույն պայմանագրի դադարման դեպքում, Պատվիրատուն Կատարողին կվճարի՝ մինչև սույն պայմանագրի դադարեցումը մատուցված Ծառայությունների համար:

6. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

6.1. Սույն պայմանագրին համապատասխան ներկայացված ցանկացած ծանուցում պետք է կազմված լինի գրավոր ձևով և ստորագրված՝ ուղարկող Կողմի անունից գործելու համար լիազորված անձի կողմից: Այդպիսի ծանուցումը կարող է հանձնվել անձամբ, ուղարկվել փոստով՝ պատվիրված նամակով կամ փոխանցվել էլեկտրոնային կապով՝ սույն պայմանագրի ստորագրության տողից առաջ նշված հասցեներով կամ համարներով:

7. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

7.1. Սույն պայմանագրի նկատմամբ, ներառյալ՝ Կողմերի իրավունքների և պարտականությունների բովանդակության, մեկնաբանման, կատարման, չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքների, դադարման, առոչինչ ճանաչվելու և դրա հետևանքների, պայմանագրից ծագող պահանջի զիջման և պարտքի փոխանցման և այլ պարտականությունների առնչությամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենքները:

7.2. Սույն պայմանագրից կամ դրա կապակցությամբ ծագող բոլոր վեճերը, տարաձայնությունները և պահանջները, ներառյալ՝ դրա կատարմանը, խախտմանը, դադարեցմանը կամ անվավերությանը վերաբերող, ենթակա են կարգավորման՝ Կողմերի միջև բանակցությունների և խորհրդակցությունների ճանապարհով, իսկ դրանցում հաջողության չհասնելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության իրավասու դատական ատյաններում:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում վավերական է, եթե կատարված է գրավոր ձևով և ստորագրված է Կողմերի կողմից:

8.2. Սույն պայմանագիրը կազմված է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից, որոնցից մեկը հանձնվում է Կատարողին, իսկ մյուսը՝ Պատվիրատուին:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ԿՈՂՄԵՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Լոռի Բերդի համայնքապետարան	«Ֆորտունա» ՍՊԸ
ՀՀ, Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 1-ին նրբ.շ.2	ՀՀ, ք. Վանաձոր, Աղայան փողոց, 81/2-1 շենք
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	Արշինբանկ ՓԲԸ
հ/հ **900252114294**	հ/հ **2471400057750000**
ՀՎՀՀ՝ 06954163	ՀՎՀՀ՝ 06404545
Լոռի Բերդի համայնքի ղեկավար Ս. Ներսիսյան	«Ֆորտունա» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Արշակյան
կ.տ.	կ.տ.

Հավելված 1
Լոռի Բերդի համայնքապետարան -ի և «Ֆորտունա» ՍՊԸ-ի միջև 07.03.2025թ.-ին կնքված
ծառայությունների մատուցման պայմանագրի

Ծառայությունների նկարագիր

Ծառայություն 1 . **Տեսանյութի նկարահանում և հեռարձակում**

I. Հեռարձակումը մարզային սփռման եթերում՝ ժամը 08:00-24:00-ի միջակայքում,
II. Տեսանյութը հեռարձակվելու է 3 անգամ :

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Լոռի Բերդի համայնքապետարան
ՀՀ, Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի
1-ին նրբ.շ.2
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
հ/հ **900252114294**
ՀՎՀՀ՝ 06954163

Լոռի Բերդի համայնքի ղեկավար
Ա. Ներսիսյան
կ.տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ֆորտունա» ՍՊԸ
ՀՀ, ք. Վանաձոր, Աղայան փողոց,
81/2-1 շենք
Արշինբանկ ՓԲԸ
հ/հ **2471400057750000**
ՀՎՀՀ՝ 06404545

«Ֆորտունա» ՍՊԸ-ի տնօրեն
Կ. Արշակյան
կ.տ.